1892 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 (Նոյ. 11), ՈՒՐԲԱԹ

№ 126—ՏԱՍՆԵՒՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 126

ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 (Նոյ. 11) 1892

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ւրեզուվ։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուսակրօն և աշխարհական եկեղեցականների խնդիրը Տաճկա-Հայաստանում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Դեր. Մել. Եպ. Մուրադեանի «Հովուական աստուածաբանութիւն» դիրքը. Պ. Կ. Կոստանեանց Ներս. Պալրանոցի տեսուչ. Գիւնեգործական դպրոցներ. Առողջապահական վագոններ. Նամակ Եկատերինոդարից. Արժ. Ս. Ք. Բեղնազարեանցի կրօնի դասագրքի արգելուիլը. Երկրորդ պատուիրած նամակ Նոր-Նախջևանից. Սիւլիվկի ցանկութիւնը «Նստատի» մասին. Ռ. Պատկանեանի պատկերը. Բարիտօն պ. Բէգլար Ամիրջանեանց. Պաշտօնական տեղեկութիւններ խոլերայի մասին. Գիւնեվաճառ պ. Ա. Թունիեանց.

ՓԻԼԻՒՍՏՈՆ.—Հին-կաթոլիկների միջազգային համագումար Ժողովը. Անգր-Կասպեան երկրի պանդուխտ հայերի անցեալ և ներկայ դրութիւնը.

ԲՈՆԱՊԱՐՏԱԿԱՆ.—Ներսէս Ե. Աշտարակեցի.

ՔՆՂԵՒԵՐԿԱՆ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ.

ՑԱՆՑԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՒՍԱԿՐՕՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Քանի ժամանակէ ի վեր Կ. Պոլսի Թերթերի մէջ վիջաբանութեան առարկայ է այն խնդիրը՝ թէ մեր Հոգևոր դասի որ ճիւղն աւելի պիտի ստուարացնել, կուսակրօն թէ աշխարհական։ Մեր մէջ հարկաւ այդպիսի խնդիր իսկ լինել կարող չէ, ոլորովհետև կուսակրօնների թիւը օր ըստ օրէ նուազում է, վանական միաբանութիւնները ասուած բանի նշոյլն անգամ չը կայ, երկու վանք միայն ունինք, մինը պատժարան, իսկ միւսը կառավարչական կենդրոն, որոնց մէջ միաբանութիւններ կան։

Նոյնը չէ կարելի Տաճկաստանին հպատակ հայազաւառների մասին ասել. այնտեղ դեռ ևս կան միաբանութիւններ ունեցող վանքեր։ Այդ վանքերն օր ըստ օրէ նոյնպէս ամայանում են, Տաճկա-Հայաստանի այժմեան վանական միաբանութիւնները այն աստիճան ամայացած են, որ մինչև իսկ առաջնորդական աթոռների համար յաջորդներ չեն հասցնում։ Եթէ մի քանի տարի ևս անցնի, ամբողջ Տաճկա-Հայաստանի թեմականներն ու Կ. Պոլսի քարոզիչները երուսաղէմի Ս. Յակովբայ միաբանութեան անդամներ պիտի լինին, որովհետև միայն այդ վանքն է, որ միաբանութիւն ունի բաւիս իսկական նշանակութեամբ։

Տաճկահայերի կեանքը համեմատութեամբ մերինի հետ՝ աւելի մեծ պահանջ ունի եկեղեցական և այլ կուսակրօն եկեղեցականաց։ Նախ Տաճկաստանի հայ թեմերը տասնապատիկ աւելի են մեր երկրի հայ թեմերից, երկրորդ՝ այնտեղ են գրտնում այնպիսի հնադարեան սրբավայրեր, որոնց պայծառութիւնը վանական միաբանութիւններից է կախուած։ Բաւական է յիշել Ս. Կարապետի հռչակաւոր վանքը միայն, որ իմանանք, թէ չէ կարելի այդպիսի մի վանք առանց միաբանութեան թողնել։ Երրորդ՝ մի հանգամանք կայ, որով Տաճկաստանի հայերի մէջ աւելի կարօտութիւն է ըղգացում կուսակրօն եկեղեցականների. այնտեղ քարոզչութիւնը, լինի այդ թաղական, թէ թեմական, անհրաժեշտ պահանջ է. այսօր միայն Կ. Պոլիսը 20-ից աւելի քարոզիչ է պահում։

Կ'առարկեն թերևս, որ քարոզչութիւնը պէտք է և կարող իսկ է աշխարհական քահանայից յատկացուիլ. դրա դէմ ասելիք չունինք, թէպետ պէտք է նկատենք, որ եթէ այդ ճշմարիտ է քաղաքների քարոզիչների վերաբերութեամբ, հազիւ թէ ընդունելի է թեմերը շրջող քարոզիչների նկատմամբ։ Նոյնը չէ կարելի ասել Տաճկա-Հայաստանի վարչական եկեղեցականների վերաբերութեամբ, որոնց պահանջն ու դիրքը բոլորվին անհամապատասխան է մերինին։

Կուսակրօն քահանայից թիւն աճեցնելու անհրաժեշտութիւններից մէկն էլ վանքերի պայծառութիւնն է, որ չենք կարծում թէ ժխտողները լինին, աչքի առաջ ունենալով այն ծառայութիւնները, որ արել են մեր ազգին և եկեղեցուն հայ վանական հաստատութիւնները։

Այս ճշմարտութիւնը կարող են ըմբռնել միայն նրանք, որոնք ծանօթ են մեր անցեալին և ոչ այն պոռոտախօս համբակները, որոնք թուրթակների նման չը հասկացած խօսքեր կրկնելով են ապրում։

Ինչքան ցաւ է մեզ համար վանական միաբանութիւնների բարձումն, նոյնքան ուրախալի պիտի լինի նրանց վերականգնումը, որովհետև վանքերը հայերիս մէջ երբէք պորտարոյծների ժողովներ չեն եղած, ինչպէս սովոր են օտարների մասին հատուկտոր և մեր մասին ոչ մի տեղեկութիւն չունեցող համբակները։

Երջանկայիշատակ Դէորգ Պ. Լաթոռկիսոսի ցանկութիւնն էր Դէորգեան ճեմարանի միջոցով բազմացնել հայ կուսակրօն եկեղեցականների թիւը և պատրաստել եկեղեցու համար հաւատարիմ ու անձնուրաց պաշտօնեաներ. սակայն որ մահկանացուին է վիճակուած տեսնել իւր իղձերի կատարեալ իրականացումը։

Յիշատակների արժանի հայրապետը մեռաւ ասելով. «կամէի շինել տուն ուրախութեան և եղև լինչ տուն ցաւոց»։ Սակայն նրա մահուանից մի տասնեակ տարի անցնելուց յետոյ այսօր նոյն ճեմարանից աւարտած հազիւ 8 միաբան ունի Ս. Էջմիածինը, որ նրա ապագայ պարծանքը պիտի լինին։

Այն ինչ որ անհնարին եղաւ Ս. Էջմիածնում տասն և ութ տարուան ընթացքում, նոյնը աւելի քիչ միջոցներով և առանց աղմկի իրագործեց Ամենասպ. Խորէն պատրիարքը Սրմաշում։ Այդ հիմնարկութիւնը եռամեայ ընթացքից յետոյ արդէն ընծայացուներ ունի։

Կ. Պոլսի Թերթերը հաղորդում են, որ Սրմաշու Գալեվանքի Սրբազան տեսուչը արդէն 7 սարկաւագ է ձեռնադրել, որոնք կուսակրօնութեան ուխտ են տուել։

Նոյն Թերթերը հաղորդում են, որ Գալեվանքի նոր շէնքն արդէն պատրաստ է և բացուել է առանձին շքով։

Այս լուսիսաչն և արիութեամբ կատարուած գործը ղլուխ են բերել Ամենաս. պատրիարգն ու Գալեվանքի ղեկանական տեսուչը։ Սակայն սոցա ի հարկէ չեն պակասում և հակառակորդները։ Այդ հակառակորդները մրտքեր պղտորելով են գործած, գործնք այդ յաջողութեամբ գլուխ բերուած գործը պատրաստ են ուրանալու և արդէն որոմն են ցանում, պաշտպան հանդիսանալով աշխարհական հոգեորականութեան։

Անհայրենիք անձինք, որոնք «Հայրենիք» անուան տակ ապաստանած Հայերի կրնատխոսութիւնը ջատագովում են, իսկ մայրենի եկեղեցու գիրկը մտնելը պարսաւում, իբր թէ այդ արգելք է յառաջադիմութեան, պիտի գոնէ այնքան ամօթ ունենան, որ եկեղեցական խնդիրներում չը խառնուեն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս ստացաւ Գերապատիւ Մելիքսեդէկ եպիսկոպոս Մուրադեանից նորա մեծաշուք նորագոյն երկասիրութիւնը, որի խորագիրն է «Հովուական աստուածաբանութիւն»։ Այս երկասիրութեան յառաջաբանից արտատպում ենք երջանկայիշատակ Ներսէս Ե. Աշտարակեցոյ վերաբերեալ յիշողութիւնները, որ ոչ ոք այնքան թարմ պահպանել և գեղեցիկ աւանդել կարող չէր, որքան երանելի Հայրապետի հիմնած դըպրոցի աւագագոյն սանը։

*
* *

Հոկտեմբերի 28-ին ներսիսեան ազգային հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը այս տարուայ ընթացքում առաջին անգամ մի նիստ ունեցաւ, որին մասնակցեցին բոլոր հոգաբարձուները, բացառութեամբ ի հարկէ բժշկապետ Մարկիսեանոս (նոյն և Նիկողայոս) Ոտինեանցի, որ ամենևին չէ յաճախում հոգաբարձական նիստերը մեծապես զբաղուած լինելով պրակտիկայով։ Հոգաբարձուներին գրաւել էր տեսչի ընտրութեան կարեւոր խնդիրը։ Համաձայն առաջարկութեան պ. Մ. Քալանթարի թամամշեանի բազմութեամբ ուժ ձայնի (պ. պ. բժշկապետ Ս. Ալանեանց, Ղ. Ալփեանց, Իշխ. Կ. Բեհբութեանց, Դ. Ըւանդուխեան, Մ. Թամամշեան, Գ. Հաքիմեան, Ա. Յովհաննիսեան, Յ. Յէր-Յովհաննիսեան, ընտրուեցաւ տեսուչ արևելեան լեզուների կանդիդատ պ. Կարապետ Կոստանեանցը։ Հոգաբարձութեան անդամ պ. Միլիք-Ադամեանցը յայտնեց թէ քանի որ իւր կարծիքով տեսչի ընտրութիւնը ցանկալի է յետաձգել, ինքը ձեռնպահ է մնում, թէև մեծապէս գնահատում է պ. Կոստանեանցի արժանաւորութիւնները։ Պ. Ղալալեանցը ձեռնպահ մնաց, յայտնելով որ ձայն չէ տալիս, քանի որ անձամբ չէ ճանաչում պ. Կոստանեանցին։

*
* *

1893 թուին, ինչպէս հաղորդում է «Նօվօե Վրեմյա» լրագիրը, Բեսարաբիայում և Ընդրկովկասում հիմնուելու են գիւնեզործական մի քանի դպրոցներ, որոնց մէջ լինելու են նաև գինիները հետազօտելու գործանոցներ։

*
* *

Մայրաքաղաքի լրագրների ասելով ներկայումս հաղորդակցութեանց նախարարութեան մէջ մշակվում է մի ծրագիր, որի համեմատ բոլոր երկաթուղիների համար պարտաւորեցուցիչ պէտք է լինի ամեն գնացքին մի մի առողջապահական վագոն ունենալ, ուր պէտք է խնամուին ճանապարհին պատահմամբ հիւանդացող ուղևորները։ Իւրաքանչիւր այդպիսի վագոնում կը լինի մի փելդշէր, որ ձեռքի տակ կ'ունենայ այն բոլոր բժշկական միջոցները, որոնք անհրաժեշտ են առաջին օգնութիւնը հասցնելու համար։

*
* *

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ, 92 Թ. ՀՈՒ. 22

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Հաւական երկար ժամանակ է արդէն, որ, թէև խոստացել եմ թղթակցել պատուական «Արձագանքիդ», այլև ոչ մի լուր և տեղեկութիւն գրած չեմ այստեղից հէնց այն պատճառով, որ մենք, այսինքն եկատերինոդարցի նոր սերնդեան ներկայացուցիչներս, գարունքը բացուելուն պէս մինչև ամառուայ վերջը խանութները փակելով իսկոյն շտապում ենք դէպի Ծընխսանս, Սանսուսի այգիները, մեր գրպանները պարպելու նպատակով։ Ինչ անենք, թէ մեր փողերը զուր տեղն են կորչում, ինչ անենք թէ մեզանից իւրաքանչիւրը հայերէն և ռուսերէն գրել կարդալ գիտէ, նոյն իսկ շաաերը Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի, րէալական ուսումնարանի և կլասիք գիմնազիայի չորրորդ կամ հինգերորդ գասատան վկայականներ ունենք. մի՞թէ այս ամէնը նրա համար է, որ գրականութեամբ, հայերէն գրքերի և լրագրերի ընթերցանութեամբ պարապենք մեր ազատ ժամերը։ Կամ մի՞թէ մենք տեղեակ պէտք է լինինք, թէ ինչ են մտածում կամ գործում մեր արիւնակից հեռաւոր եղբայրները։ Ինչ կացութեան մէջ է մեր եկեղեցին, մեր հոգևորականութիւնը, մեր երկսեռ ծխական ուսումնարանը, ոչ ոք հարցնող չկայ և լինելու էլ չէ. որովհետև նրանց գոյութիւնը մեզ համար, բանաստեղծի խօսքերով ասեմ—եղած՝ չեղած, մէկ հաշիւ է։ Մեզ հարցրէք՝ թէ հայ ազաներից ո՞րն է քանի մի հարիւր մանէթ տարուել անցեալ գիշերը թղթախաղում. մեզ հարցրէք՝ թէ ո՞վ է Մոսկուացիների հազարները կուլ տուել և այս պատճառով բանոր նսեմ. մեզ հարցրէք՝ թէ Ծընխսանս և տոնէական եկեղեցիներին ուղղած միութիւն ստեղծելու նախնական քրիստոն ուխտեան հիման վրայ։

II. Քրիստոնեաների համար պարտաւորական է միայն Քրիստոսի վէրջապէս-ին, բայց ոչ աստուածաբանական տեսութիւնները, որոնցից կարող են ծագել զուտ մարդկային, ազատ ու անպարտադիր կարծիքներ։ Իսկ Քրիստոսական վարդապետութիւն և ճշմարիտ քրիստոնէական դաւանութիւն մենք ճանաչում ենք այն վարդապետութիւնը, որ իբրև Քրիստոսական ճանաչուած է քրիստոնէական եկեղեցիների ընդհանուր, մշտական ու միաբան աւանդութեամբ. այս բանում մենք համաձայն ենք Հոլանդական, գերմանական ու Ջուիցերիայի եպիսկոպոսների Ֆ[illegible] հետ, որ ստորագրուած է Ուտրեխտում 1889 թ. սեպտեմբերի 24-ին (Utrechter Erklärung)։

III. Հիմնուելով ազգային եկեղեցիների նախնական աւանդութեան վրայ, որոնք տիեզերական եկեղեցու ընդհանուր կարգապահութեան կանոնները լիովին ճանաչելով հանդերձ՝ պահպանել են իրանց ինքնուրոյնութիւնը և առանձնայատկութիւնները իրանց կրթութեան, կարիքների և սովորութեանց համաձայն, ժողովը ընդունում է հետևեալ սկզբունքը.

ՓԻԼԻՒՍՏՈՆ

ՀԻՆ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ *) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

—

Սեպտեմբերի կէսին Ջուիցերիայի Լիւցերն քաղաքում գումարուել է Հին-կաթոլիկների երկրորդ միջազգային ժողովը, որ տևել է երեք օր։ «Նով. Վրեմիա» լրագրի խմբագրութեան խնդիրքի համաձայն Բերլինի ռուսաց դեսպանատան քահանայ Ա. Մալցևը, որ անձամբ մասնակցել է յիշեալ ժողովին, մանրամասնօրէն նկարագրում է այդ համագումարի պարապմունքները։

Հաւատացած լինելով որ մեր ընթերցողների համար հետաքրքրական կը լինին այդ ժողովում յարուցուած խնդիրները, մենք քաղուածօրէն կամենում ենք հաղորդել այդ յօդուածի էական մասերը։

Ժողովին մասնակցել են աւելի քան 300 հոգի, որոնք հաւաքուել են ոչ միայն Եւրոպայի զանազան տերութիւններից, այլ և աշխարհիս այլ և այլ մասերից։ Այսպէս, օրինակ, Հալիտի կղզին անգամ ունեցել է այդ ժողովում իւր ներկայացուցիչը։ Մեր եկեղեցու կողմից իբրև անգամ մասնակցել է ժողովին Երուսաղէմից գնացած աստուածաբան Dr. Jsaak (դոկտոր Իսահակ)։

Վաղօրօք հրատարակած ծրագրի համաձայն ժողովի բացման նախընթաց երեկոյեան, ժամի 8-ին, տեղի է ունեցել պատգամաւորներին ու հիւրերին դիմաւորելու հանդէսը քաղաքային թատրոնում, ուր տեղական եկեղեցական խորհրդի վոխ-նախագահ Դր. Ձտայդերը ողջունել է ժողովի անդամների գալուստը հետեւեալ խօսքերով.

«Կրկին նպատակով ենք դումարուած մենք այստեղ, ասում է Դր. Ձտայդերը,—նախ՝ որպէսզի բոլոքենք պապի իրօք հեռանալուն աստուածացման դէմ, պապի՝ որ մի տեսակ նոր divus Caesar է (աստուած կայսր) և այս իսկապէս մեր բացասական նպատակն է, որից բղխում է և երկրորդը — դրականը, այն է՝ եկեղեցիների ու քրիստոնեաների մէջ-ինչպէ՝ նախնական, անբաժան եկեղեցու վարդապետութիւնն ու կեանքը վերականգնելու նպատակով, աշխատել եկեղեցական միութեան զեղիւղ գործի համար, այնպէս անելով, որ ըստ երանելոյն Օգոստինոսի՝ պահպանած լինի—in necessariis unitas, in dubiis—libertas, in omnibus—caritas (կարևոր բաներում՝ միութիւն, երկբայելի բաներում՝ ազատութիւն, ամէն բանում՝ սէր)»։

Յաջորդ օրը, սեպտեմբերի 13-ին, բացուում է ժողովը հանդիսաւոր ժամասացութեամբ հին-կաթոլիկների նորակառոյց գեղեցիկ տաճարում (Christus-kirche)։ Ժամասացութեան վերջում Հերցօգ եպիսկոպոսը դառնում է յոյն արքեպիսկոպոս Նիկիփորոսին և հետևեալ խօսքերով խնդրում է նորան հայրական օրհնութիւն շնորհել իւր հօտին.

«Ինձ համար պատիւ է և ուրախութիւն որ այս իսկ ժամասացութեան պահուն տեսնում եմ արդէն մի քանի բարձրադոյն հոգևոր ներկայացուցիչներ, որոնք եկել են մեր ժողովին մասնակցելու արևմուտքից և արևելքից։ Առանձին բերկրութեամբ ու յարգանքով ողջունում եմ Պատրասի Նիկիփորոս սրբազան արքեպիսկոպոսին։ Արքեպիսկոպոսը ժամանել է այստեղ այն երկրից, ուր դանագան անկիւններում յաճախ Աւետարան է քարոզել ս. Պօղոս առաքեալը։ Արքեպիսկոպոսը խոսում է այն լեզուով, որով խոսում էին Քրիստոսի առաջին ծառաները քրիստոնէական վարդապետութիւնը տարածելիս և որով գրուել են Աստուածաշնչի նոր կտակարանի գրքերը։ Այդ եկեղեցին է որին յունական վառաւոր դիտութիւնը պահպանել է անվթար, չնայելով տաճկական բազմադարեան լծին։ Եւ եթէ յոյն ազգը կարողացաւ յաղթահարել այդ լուծը և վերածնուել նոր կեանքի համար, այդ նա պարտական է գլխաւորապէս իւր ազգային եկեղեցուն։ Այժմ գարձեալ ծաղկում են այդ դեղեցիկ երկրում դեղարուեստն ու գիտութիւնը, վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը, բարձր աստուածաբանական դիտութիւնը ևս վերածնուել է։ Այդ դիտութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից մէկը Յունաստանում Նեկիփորոս սրբազան արքեպիսկոպոսն է, որին ես ողջունում եմ երախտագէտ յարգանքով և խնդրում եմ նորան օրհնել մեր համայնքն ու եկեղեցին ս. Պօղոս առաքեալի լեզուով»։

Այս խնդիրքին պատասխանելով արքեպիսկոպոսն օրհնեց յունարէն լեզուով այսպէս.

«Մեր Տէրոջ՝ Յիսուսի Քրիստոսի օրհնութիւնը, Հայր Աստուծոյ սէրը և սուրբ Հոգու շնորհքը ձեզ վրայ լինի յաւիտեան. ամէն»։

Ժամասացութիւնից յետոյ, ժամի 9½-ին, բոլոր ներկայ եղողները զբնացին մերձակայ շինութիւնը—Turnhalle։ Ժողովի նախագահ միաձայն ընտրուեցաւ Դր. Ֆիլիպպին (Բազէլից)։ Այնուհետև սկսուեցաւ ստորև յառաջ բերած իննն խնդիրներից առաջնի քննութիւնը, որոնք առաջարկուած էին ժողովի քննութեանը. նախապէս որոշուեցաւ որ «դաւանաբանական խնդիրները և ներքին, ազգային-եկեղեցական յարաբերութիւնները ժողովի իրաւասութիւնից դուրս լինելով՝ վիճաբանութեանց առարկայ պիտի չդառնան»։

Այդ խնդիրները հետևեալներն են.

I. Հին-կաթոլիկութիւնը միայն քաղ չէ Վատիկանի նոր դաւանութեանց և մասնաւորապէս պապի անսխալականութեան դէմ, այլ և էլեմենտ է դեռևս նախնական ճշմարիտ էութիւնը, ոչ և անբաժան նէեղէզիս, պալատական և եզուիտական եկեղեցական սիստեմների մտած եղծումները վերացնելով։ Առաւել և ս. Հին-կաթոլիկութիւնը նաև հրաւէր է բոլոր քրիստոնէական եկեղեցիներին ուղղած միութիւն ստեղծելու նախնական քրիստոն ուխտեան հիման վրայ։

II. Քրիստոնեաների համար պարտաւորական է միայն Քրիստոսի վէրջապէս-ին, բայց ոչ աստուածաբանական տեսութիւնները, որոնցից կարող են ծագել զուտ մարդկային, ազատ ու անպարտադիր կարծիքներ։ Իսկ Քրիստոսական վարդապետութիւն և ճշմարիտ քրիստոնէական դաւանութիւն մենք ճանաչում ենք այն վարդապետութիւնը, որ իբրև Քրիստոսական ճանաչուած է քրիստոնէական եկեղեցիների ընդհանուր, մշտական ու միաբան աւանդութեամբ. այս բանում մենք համաձայն ենք Հոլանդական, գերմանական ու Ջուիցերիայի եպիսկոպոսների Ֆ[illegible] հետ, որ ստորագրուած է Ուտրեխտում 1889 թ. սեպտեմբերի 24-ին (Utrechter Erklärung)։

III. Հիմնուելով ազգային եկեղեցիների նախնական աւանդութեան վրայ, որոնք տիեզերական եկեղեցու ընդհանուր կարգապահութեան կանոնները լիովին ճանաչելով հանդերձ՝ պահպանել են իրանց ինքնուրոյնութիւնը և առանձնայատկութիւնները իրանց կրթութեան, կարիքների և սովորութեանց համաձայն, ժողովը ընդունում է հետևեալ սկզբունքը.

*) Հին կոչուում են այն կաթոլիկները, որոնք չեն ընդունում պապի անսխալականութեան սկզբունքը։ Վերջին ժամանակներն այդ հակապապականները շատ են զբաղուած եկեղեցիների միութեան խնդրով աւետարանական ճշմարտութեանց հիմամբ, սակայն նոքա ընդունում են եկեղեցիների ներքին առանձնութիւնը, եկեղեցիների ազգայնութիւնը։

Սանսուսիում ինչպիսի սկանդալներ ենք արել... Թող մէկը դուրս գայ և ջրէ փաստօրէն ասածներս. Թող հաստատէ, որ մեր փայտեայ եկեղեցին վերանորոգման կարօտ չէ, թէ մեր ծխական ուսումնարանը չէ յետադիմում։ Ամօթալի չէ՞ տեղիս հայ հասարակութեան համար, որի ձեռքում է գտնվում Կուբանի նահանգի ամբողջ վաճառականութիւնը, որ մինչ օրս չէ մտածում ապահովել ուսումնարանը, էլ չեմ ասում երկդասեան դարձնել։

Հոգաբարձուները ստիպուած են տարուայ նշանաւոր մեծ տօներին կոլէկներ մուրալ, որպէս զի վարժապետի և վարժուհու ողորմելի ռոճիկը վճարեն։

Հոգաբարձութիւնը ստիպուեց այս տարի ծխական ուսումնարանի դահլիճի թատերաբեմը վարձու տալ մի անյայտ անտրպրենօրի տարեկան հազար մանէթով. չեմ կարծում թէ ուսումնարանը օգուտ ստանայ, բացի բարոյական վնասից. որովհետև դահլիճին կից վարժապետական կոչուած սենեակը, որտեղ է և գրադարան մատենադարանը, դարձել է գինետան նման մի բան, որի լայն պատուհաններից, փողոցով անցնողի աչքին են զարնում դարակների մեծ և փոքր գինու և զանազան խմիչքների շիշերը։ Չեմ կարող հաստատ ասել. արդեօք հոգաբարձութիւնը ինքնագլուխ վարուեց այս բանում, թէ բարձրագոյն վարչութեան թոյլտուութեամբ եղաւ։

Ինչպէս էլ վարուած լինի, իմ կարծիքով, սխալ է արածը. ինչ հարկ կար այդպիսի ծայրայեղ միջոցի դիմելու, երբ արդէն տարիներով կազմակերպուած թատերասէրների խումբը ներկայացումներ էր տալիս յիշեալ ուսումնարանի օգտին։

Արդեօք զարմանալի չէ՞, որ տեղիս հասարակութիւնը իւր հաշուով կառուցել է մօտ 12,000 մանէթ արժեցող ուսումնարան և մինչև այժմ չէ ապահովել դպրոցի պահպանութեան նիւթական վիճակը։ Ինչ՞ մինչև այժմ յիշեալ ուսումնարանի կառուցանող մասնաժողովը չէ դիմում ուրիշ աւելի հիմնաւոր միջոցների. մինչև երբ պէտք է անտարբեր աչքով նայէ քաղաքը իւր զաւակների կրթարանի, մայրենի լեզու և կրօն սովորեցնող հիմնարկութեան օր աւուր յետադիմող ցաւալի դրութեան վրայ։

Նախկին թղթակցութիւններիս մէջ գրել էի, որ այս մասնաժողովը մինչև հիմայ ոչ մի հաշիւ տուած չէ հասարակութեան. այսպէս գրելով կարծում էի թէ ժողովրդի արդար պահանջին բաւարարութիւն կը տայ յիշեալ մասնաժողովը. իսկի էլ չէ, ինչպէս երևում է հաշիւ տալը մասնաժողովների անդամների պրոգրամում տակաւին չկայ։ Այս կարծես թէ բաւական չէ, մէկ էլ տեսնես, ուր տեղից է դուրս պրծնում մէկը և թղթակցութեամբ տեղիդ հայ լրագրներից մէկում յայտնում է, որ ցանկացողը կարող է գնալ այս ինչ աղայի մօտ և հաշիւները ստուգել. . .

Մեր քաղաքում ամեն մի բախտախնդիր պաշտպանութիւն է գտնում. գալիս է մէկը, ինքն իրեն դերասան հռչակում, խօսում է մեզ անհասկանալի լեզուով—«թէատրինօ դուրս արածինօ. ամ բօնջիօրնօ սինեօրինօ, եկելինօ ձեր փողերինօ առնելինօ, հացը ուտելինօ և ձեզ լաւ խաբէլինօ»,—արի տես մեր կովային հիացումը այս անծանօթ վերաբերմամբ, էլ չգիտենք ինչպէս ընդունենք, պատուասիրենք, յարգենք այս չնաշխարհիկ անծանօթ հրեշտակին։

Երևում է դանդալախին մէկը, փէսը գլխին, աւազակային դէմքով, որին եթէ ճանապարհին մենակ պատահես լեղիդ կը պատռի, խօսում է à la հոտոտ, դարձեալ չենք հասկանում, բայց հիացմից խելքներս կորցնելով, տեսնում ես մէկը մեզանից ձայն է տալիս.—«հանձէ, մէչմը վաղը խանութս գաս, բան մը ունիմ գրելու. հայնակ գրել գիտէս խօ»։

Ահա այսպիսի մարդկանցով է բազմանում մեր հասարակութիւնը՝ ալքատի տոպրակի նման, ուր ամեն բան մտնում է բացի լաւից։ Ի՞նչ ինչ ասեմ մեր տէրտէրների մասին, որոնցից մէկը այն աստիճան ծեր է, որ շատ դողդողալուց ոչ մի ծիսակատարութիւն չէ կարող անել, միւսը գնացել է Պետերբուրգ, չգիտենք երբ կը վերադառնայ, երրորդը շրջակայ գիւղերն է ման գալիս, չորրորդն էլ այստեղ է և մեր հոգևոր պէտքերն է հոգում։

Բայց բանն այն է, որ քանի մի խելացիների կարծիքով, տէրտէրների թիւը պակաս է մեզանում իբր թէ և ահա ուզում են խնդրագրով դիմել գերապատիւ Սուրէնեանց սրբազանին, որ մեզ համար քահանայ ձեռնադրէ մէկին։

Տեղացիներս համոզուած ենք, որ գեր. Սուրէնեանց սրբազանը կը մերժէ այդ խնդիրը մեծամասնութեան ցանկութեան համեմատ. Եւ ինչ հարկ կայ հինգերորդ քահանայ էլ ունենալ, քանի որ եղածներն էլ շատ շատ են մօտ 300 ընտանիքի համար. ինչ հարկաւոր է եկեղեցին լցնել այնպիսի քահանաներով, որոնք կանոնաւոր հայերէն անգամ չգիտեն, քարոզելու ժամանակ էլ իրենց զայրոյթն են թափում մեր գլխին, որ մենք ոչինչ չը գիտենք, կարծես թէ շատ են ուզեցել մեզ լաւ բան սովորեցնել և մենք չենք սովորել։

—Դուք տգէտ էք, բան չէք հասկանալի, ես ձեզ հետ Արարատեան բարբառով եմ խօսելի, իսկ եթէ չէք հասկանալի, եկէք տունս, ես պատրաստ եմ ձեզ բացատրելու,—արի ու հասկացիր քարոզչական այսօրինակ գոհարներ։

Խօլերը մեզ էլ այցելեց, խիստ կոտորած էր գործում աւելի Դուբինկա կոչուած և Կարասու ճահճի շրջակայ տեղերում. շատ կոտորուեցան կայսրաններում նամանաւանդ Չերքէզ աւուլներում։ Հայերից զոհ գնաց Գ. Ճահինեանց անունով եօթանասուն ամեայ ծերունին, որ քանի մի տարի առաջ իւր 8000 մանէթ եկամուտ բերող կալուածքը կըտակել էր տեղիս ուսումնարանին այն պայմանով, որ իւր մահուանից յետոյ իւր կինը շահուէր մինչև մեռնելը, այնուհետև մնար ուսումնարանին. բայց դժբաղդաբար լսեցինք, որ վերոյիշեալ կտակը փոխել է տուել հանգուցեալը, առանց մէկին բան ասելու, յօդուտ իւր կնոջը, տալով սրան կատարեալ իրաւունք փոխել իւր հայեցողութեան համեմատ։ Ասում են, որ հանգուցեալը խիստ զղջացած լինելով մեզնից քահանաների վարմունքից, փոխել է իւր դիտաւորութիւնը։ Այս տարի հացաբոյսը և կենսական մթերքը շատ առատ է, բայց խոլերի պատճառով օտար նաւեր չեն մտնում մեր ծովափնեայ քաղաքները արտահանելու. ահա այս է պատճառը, որ ամբողջ Կուբանի նահանգում առուտուր չկայ։

Զօրաձօպլէ։

* * *

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը իւր հոկտ. 28-ի նիստում որոշեց արգելել արժանապատիւ Սարգիս քահ. Բէգնազարեանցի «Համառօտ քրիստոնէական» կոչուած թարգմանական դասագրքի գործածութիւնը և պատուիրեցաւ տեսչի օգնականին՝ ժողովել աշակերտներից այդ գրքի օրինակները։

* * *

Նախիջևանի (Նոր) փաստաբան պարոն Չալխուշեանը մի երկրորդ պատուիրած նամակ է ուղղել «Մշակի» խմբագրութեան, որ այս անգամ տեղ-տեղ է միայն ռուսերէն։ Ի՞նչ ասել գուզէ որ «Մշակը» խմբագրական յօդուածի տեղ է շնորհել այդ իրաւաբանական և այլ գոհարներով լի նամակին։ Ո՞չինչ նոր փաստ չէ հաղորդում փաստաբան Չալխուշեանը. Նա ընդունում է մեր առաջարկը և՝ թէպէտ ուշ, սպառնում է դատաստանի դիմել։ Allons-y!

* * *

Մի նոր ապացոյց, որ Սիւլլիկը անպատճառ կամենում էր իւր «Աստառ» կօմէդիան տպուած տեսնել, հաղորդում է Նոր-Դարը իւր 169 համարում. ահա թէ ինչ է գրում «Նոր-Դարը».

«. . . որ հանգուցեալ բանաստեղծի մեծ ցանկութիւնն էր իւր այդ կօմէդիան (Աստառը) ներկայացրած, գոնէ տպած տեսնել, որի մասին մենք ունինք և նրա մեզ ուղղած նամակը»։

* * *

Illustrated London News յայտնի պատկերազարդ շաբաթաթերթում հրատարակուած է Ռափայէլ Պատկանեանի պատկերը շատ գեղեցիկ նկարած։

* * *

Միլանից գրում են «Նովօստի» լրագրին, որ «Պետերբուրգի կօնսերվատօրիայի նախկին աշակերտ պ. Բէգլար Ամիրջանեանցը, որ գեղեցիկ տեմբրով մի ուժեղ բարիտօն է, այս օրերս ընդունուել է, իբրև բոլոր մրցողների մէջ ամենաընտիրը, Միլանի կօնսերվատօրիան։ Իտալիայում երգեցողութեան յայտնի պրօֆեսօր Րօնկօնին մի փառաւոր ապագայ է գուշակում երիտասարդ երգչի համար»։

* * *

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիզի Միքայէլեան հիւանդանոցում հոկտ. 27-ին հիւանդ 2 տղամարդ կար. այդ օրուայ ընթացքում նորից բերած է 6-րդ քաղաքամասից 1 կին՝ Աբդուլա-Ղզի-Բայ, որ և մեռաւ հիւանդանոց բերելուց յետոյ։

Թելաւի նահանգում, Հարաջարինեան հասարակութեան մէջ խօլերայի նշաններով հիւանդութիւն երևաց—հիւանդացան 6 հոգի, առողջացան 1 մարդ և 3 կին. մեռան 2-ը. հոկտեմբերի 12-ից հիւանդութիւնը վերջացաւ։

* * *

Թիֆլիզի յայտնի գինեվաճառ Աղէքսանդր Թոռնիեանցը արտասահմանեան ցուցահանդէսներում արժանացել է հետևեալ պարգևների.

1. Նիդէրլանդիայի թագաւորութեան մէջ, Հաագ-Շէվէնինգ քաղաքի միջազգային ցուցահանդիսում ստացել է բարձր պարգև, այն է՝ ոսկէ մեդալ և անուանական դիպլօմի հետ նաև կրելու առանձին նշան։

2. Լօնդօնի Ֆրանսիական արտադրութեանց ցուցահանդիսում 'ի ցոյց դրուած Կովկասեան կարմիր ու սպիտակ գինիների համար ստացել է նոյնպէս ամենաբարձր պարգևը՝ ոսկէ մեդալ, պատուաւոր դիպլօմ ֆրանսիական նշանով «Ծառայութեան համար» (honneur au travail) վերտառութեամբ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

(Մի յառաջաբանից)

Հովուին հսկողի, ճշմարիտ և քաջ հովուին պատկերի՝ հովիւքն եղեն հետևողք։

Ճառք. Ս. Լուսաւորչի։

Երանաշնորհ Հայրապետն Ներսէս Ե. Աշտարակեցի, որոյ անմահ յիշատակին նուիրելով՝ կը հրատարակենք մեր աշխատասիրած սոյն «Հովուական աստուածաբանութիւնն», այն մեծանուն հովուապետաց դասէն էր, որք, ամենածանր դժբաղդանց և տագնապալից օրերու մէջ անգամ, մոռցած չեն բնաւ՝ բարձրացնել Եկեղեցական Պաշտօնէութիւնն, ծաւալել Աւետարանի լոյսն և սրբել ու լուսաւորել իրենց հօտի քրիստոնէական կեանքն ու կենցաղն։

Ներսէս, ո՛չ միայն ի հայրապետութեան, այլ յառաջնորդութեան իսկ Թիֆլիս, ուր հիմնած էր Ներսիսեան հոյակապ Ուսումնարանն, այլ յարքեպիսկոպոսական պաշտաման իսկ ի Ս. Էջմիածին, միշտ իրեն գլխաւոր պարտք համարած էր ընտիր եկեղեցականներ պատրաստել, քարոզիչ հովիւներ հասցնել։

Ներսէս Աշտարակեցւոյն բազմաթիւ Թղթոց և Կոնդակաց մէջ թերևս չը կան կամ յոյժ սակաւաթիւ են այնպիսիքն, որոց մէջ կրկնուած չը լինի ուսման, գիտութեան, կրթութեան յիշատակութիւնն։ Այդ մասին մեր քաղած հետևեալ քանի մի տողերն բաւական իսկ են զարթուցանել այն բարձր մտախոհութեան յիշատակն՝ թէ որչափ մեծ կարևորութիւն տուած է Նա եկեղեցականութեան, հովուութեան խնդրոյն, որով դրաւուած էր իւր միտքն, մինչև անգամ ամբոցի մէջ պատսպարուած ժամանակն իսկ։

1827 Թուականին, այն ինչ Եփրեմ կաթողիկոսն առանձնացած էր ի Հաղպատ և Ներսէս Արքեպիսկոպոսն կարգուած էր Տայրաղոյն Կառավարիչ՝ եկեղեցական բարձր իշխանութիւնն վարելու համար՝ հաճութեամբ կաթողիկոսին, Երևանէն այսպէս կը գրէր Ս. Էջմիածնի Կառավարական հոգևոր ժողովոյն. «Իսկ ես զառաջին այժմ առ օգտի Սրբոյ Եկեղեցւոյ և վարդապետաց քարոզչաց Աստուծոյ ամենայն՝ որպէս զի արժանաւորեսցին ըստ բանիցն առաքելականայ կրկին պատւոյ, աշխատութեամբ բանին և վարդապետութեամբ, աստուածային սուրբ պարտաւորութիւն համարիմ Կառավարութեան Մայր Եկեղեցւոյ ամենայն հայոց՝ օրէն յաւիտենական կարգեալ վասն ամենայն քարոզչաց. զի ըստ օրինի բաբեկարգեալ ազգաց նախ՝ զքարոզելիսն գրեսցեն քարոզիչք և այնպէս առա զգրեալսն քարոզեսցեն յատենի, մինչև շնորհն Աստուծոյ զարգացուսցէ զայն ատենաբանութիւն նոցա ի պտղաբերութիւն հաճոյականացն Աստուծոյ և մարդկան և պակասեսցին Եկեղեցւոյ ամենի յանդգնութիւնք սնոտիապանծ ցոփաբանից»։ Իսկ Վանուց աշակերտաց քարոզչական պատրաստութեան համար կը գրէր այսպէս. «Զի ի չլինել ուսմանց՝ ոչ լինին քարոզութիւնք և ի չլինել քարոզութեանց՝ ոչ լինին լուրք և ո՛չ ևս հաւատ. զի արմատ հաւատոյ են ուսմունք, որպէս և յայտ է, զի յԱզգի մերում իսկ՝ ընդ աճել ուսմանց՝ աճեցին հաւատք. և ի նուազել ուսմանց՝ զհաւատացեալսն իսկ դողացան ծարաւէք»։ Այս պատուէր կը տայ Վանուց Կառավարութեան, որ չըստիպեն աշակերտներն ամեն օր ներկայ լինել ժամերգութեան, այլ միայն Կիւրակէ, և Տօն օրերն, որպէս զի մնացած ժամանակն կարենան ուսանիլ և պատրաստուիլ։

Սոյն հրահանգներն կամ պատուէրներն տալէն ի վեր՝ քառասուն տարիներ հալովուած էին, շատ անցքեր անցած և Ներսէս արդէն հայրապետութեան գահն բարձրացած, որ մերթ յէջմիածին և մերթ ի Թիֆլիզ կը բնակէր, մանաւանդ իւր կենաց վերջին տարիներն (1851—1857)։ Այս ժամանակն էր ահա, որ մենք ևս կ'ուսանէինք ի Ներսիսեան Ուսումնարանի, զոր հիմնադիրն կը սիրէր Սերմնարան անուանել, ուր կը սերմանուէին սերմունք Աւետարանի, սերմունք գիտութեան, որք պիտի ծլէին, ծաղկէին և պտղաբերէին ի հոգևոր սնունդ ժողովրդեան։ Անպատում ուրախութիւն և կենդանութիւն կը թագաւորէին Դպրանոցին մէջ։ Իմաստուն և առաքինի Տեսուչն, Պետրոս Շանշեանց, կը հսկէր, կ'ուսուցանէր և կ'ոգևորէր ուսուցիչներն և ուսանողներն. իսկ Ս. Հայրապետն կը քաջալերէր ամենքն իւր հայրական յաճախ այցելութեամբ։

Մի օր, բարձրագոյն դասարանէն, քանի մի սանունք կոչուեցանք ի Վեհարանն, որ Դպրանոցէն շատ հեռի չէր։ Սարկաւագն առաջնորդեց մեզ ի դահլիճն և ինքն գնաց լուր տալու։ Շատ չանցած, Ս. Հայրապետն վեղար ի գլուխ, իւր պարապման սենեկէն դահլիճն մտաւ մեր Ազնիւ Տեսչին հետ միասին։ Մօտեցանք, սուրբ աջն համբուրեցինք և կարգաւ շարուեցանք։ Ս. Հայրապետն յայտնեց, թէ շատ գոհ է մեր յառաջադիմութենէն, մանաւանդ կրօնական և եկեղեցական ուսմանց նկատմամբ, ինչպէս որ ինքն քանիցս ականատես եղած և ստուգած է հարցաքննութեանց ժամանակ և ինչպէս որ կը վկայէ Ազնիւ Տեսուչն։ Ապա բացաւ մի ծրար, որ սեղանի վրայ դրուած էր և առնելով Խաչանիշ Ուրարներ, (որք իւր իսկ հոգածութեամբ պատրաստուած և մեր անուններն նշանակուած էին) մի առ մի ձգեց, իւրաքանչիւրիս ուսն՝ իւր սուրբ ձեռօք, աղօթեց, Պահպանիչ ասաց և սիրով բացատրեց իւր նպատակն։

Շատ յուզուած էր Ս. Հայրապետն, երբ կը նկարագրէր Եկեղեցւոյ ու Եկեղեցականութեան վիճակն։ Յուզուած էր նոյնպէս մեր Տեսուչն, որոյ քաղցրահայեաց աչերն տամկացած էին արտասուքով. իսկ մեր սրտերն կը ճմլէին, և մեր մտաց վրայ կը տիրէր մի անբացատրելի հիացումն։ Ս. Հայրապետն կնքեց իւր խօսքն այսպէս. «Ձեր Ուրարներն՝ ունայն զարդեր չեն, այլ նշանակ այն խորհրդաւոր և հոգևոր լծոյն, զոր պարտիք կրել, այժմէն պատրաստուելով նուիրել ձեր անձն Եկեղեցւոյ սպասաւորութեան։ Այս օրէն սկսեալ՝ պարտաւոր էք քարոզներ գրել, Տեսչի առաջ կարդալ, լաւ պատրաստել և նշանակեալ Կիւրակէ աւուրց մէջ, երեկոյեան ժամերգութենէն զկնի՝ խօսիլ ժողովրդեան։ Ես իսկ ինքնին ուրախ պիտի լինիմ լսել ձեր քարոզներն Մայր Եկեղեցւոյ մէջ։ Պարտաւոր էք նախ ժամաշապիկ հագնել, ուրարն ի յուս սեղանն ելնել, ձեր գրածն գրքակալի վրայ դնել, երբեմն նայելու չը շփոթուելու համար, և այնպէս խօսիլ, մինչև որ վարժիք համարձակ խօսելու»։

Յնծութեամբ և դողութեամբ համբու-

թէ արևելեան և թէ արևմտեան մասնաւոր եկեղեցիների անկապտելի իրաւունքն է ազատ լինել իրանց կրօնական հայեացքներում ու գործողութիւններում, առանց որ և է օտար ազդեցութեամբ իրանց ճնշելու, և իրանց կազմակերպութեան ու վարչութեան մէջ 'ի նկատ առնել ազգային սովորութիւնները և կրթութեան ու աւանդութեանց տարբերութիւնը։

IV. Աչքի առաջ ունենալով այն փաստը, որ անգլիեռնականութիւնը Լևոն XIII-ի ճարպիկ քաղաքականութեան շնորհիւ աւելի ու աւելի ընդարձակում է իւր գործունէութեան միջոցները և դեռ շարունակում է մոլորեցնել մարդկութիւնը, մերթ իբրև կրօնական սիստեմ, կեղծաւորութեամբ ցոյց տալով թէ ճշմարիտ քրիստոնէական բարեպաշտութիւն մենակ ինքն ունի, մերթ իբրև քաղաքական սիստեմ, ստութեամբ մեծացնելով իւր quasi-մարդասիրական ձգտումները և ջանալով վայր ձգել աշխարհիկ իշխանութիւնների վարկը,—ժողովը դիմում է բոլոր քրիստոնեայ եկեղեցիների անդամներին հրաւիրելով նոցա մերկացնել անգլիեռնականութիւնը այս երկու տեսակէտից. որպէս հռոմէական կրօնական սիստեմ և որպէս քաղաքական սիստեմ, որ թշնամի է քաղաքակրթութեան և ազգային ու պետական շահերի։ Թող եկեղեցիները մոռանան իրանց երկրորդական տարբերութիւնները և միանան միմեանց պաշտպանելու նպատակով այդ կարգաւորեալ սոսկալի ուժի դէմ, որ այժմ ձգտում է իւր օգտի համար ձեռքը ձգել սօցիալական խնդիրները ոչ թէ նոցանից մէկն ու մէկը լուծելու նպատակով, այլ միայն որպէս զի ստրկացնէ բանուորներին, ինչպէս որ մի ժամանակ աշխատում էր ստրկացնել մեծամեծներին ու իշխաններին։

V. Ամէն տեսակ անուն ունեցող բողոքականներին խնդրում է ժողովը որ այլ ևս կաթոլիկէ չկոչուին, որովհետև այդ անունը պատկանում է միայն ուղղափառական հաւատ դաւանող քրիստոնեաներին. նմանապէս խնդրում է ռոմանիստներին, պապականներին, ուլտրամոնտանականներին, որոնք չնայելով իրանց մեծ թւին՝ չեն ընդունում ոչ եկեղեցու տիեզերական դաւանութիւնը և ոչ էլ պահպանում են նորա տիեզերական բարոյականն ու կարգապահութիւնը և որոնք հետևապէս իրը (chose) չունենալով՝ նորա անունը (nom) կրելու իրաւունքն էլ չունին։

VI. Ցանկալի է հիմնել մի միջազգային (!) աստուածաբանական բարձրագոյն դպրոց և նոյնպիսի մի աստուածաբանական պարբերական հրատարակութիւն։

VII. Ի նկատ առնելով, որ անտարբերութիւնը (ինդեֆերենտիզմ) մեր ժամանակի մեծագոյն չարիքներից մէկն է, ժողովը պարտաւորեցնում է իւր համախոհներին յիշել, որ անտարբերութիւնը ոչ մի մեծ բան չէ ստեղծում, այլ ընդհակառակը կործանում է ամենամեծ բաներ և վայր է ձգում ամենալաւ գործերի անունը. ժողովը համոզուած է նոցա անձնատուր լինել տիեզերական վերանորոգութեան գործին անդուլ եռանդով՝ անդադար ժողովների մասնակցելով կամ դրականութեան ու պարբերական հրատարակութեանց միջոցով արծարծելով խնդիրը, այլ և այդ գործի համար մասնաւոր նուիրաբերութիւններ անելով։

VIII. Ժողովը մանաւանդ առաջարկում է կանոնաւոր կերպով յաճախել եկեղեցի կիւրակի և տօն օրերը, նաև ընդհանուր երգասացութեամբ մասնակցել այդ օրերի ժամերգութեանը։ Ժողովը ցանկութիւն է յայտնում որ բոլոր հին-կաթոլիկական եկեղեցիներն աշխատեն ի մի վերածել իրանց ժամագրքերը։ Ուրախալի կը լինէր տեսնել նմանապէս այլ և այլ քրիստոնեայ համայնքների անդամների մի կազմակերպութիւն, ժողովների միջոցով խրատելու, բարեգործութիւն անելու, փոխադարձ օգնութեան և բարի գործերի համար, առանց դաւանութեան խտրութեան։

IX. Ժողովը յիշեցնում է որ հինկաթոլիկները, միշտ պատրաստ լինելով ցոյց տալու իրանց համբերատարութեան ու եղբայրութեան զգացմունքները, երբէք չեն դադարել առաջարկելու և այժմ էլ առաջարկում են ամենայն անկեղծութեամբ իրանց եկեղեցիներն ու մատուռները միասին օգտուելու համար, ոչ նուազ անկեղծ փոխադարձ առաջարկութեան պայմանով։ Ժողովը այս կէտի վրայ պնդում է մանաւանդ այն պատճառով, որ եկեղեցիներից միասին ժամասայութեան համար օգտուելը ոչ միայն քրիստոնէաների փոխադարձ յարգանքի և եղբայրութեան նշան է համարում, այլ և մի գեղեցիկ միջոց վերականգնելու աւելի քան երբ և իցէ անհրաժեշտ կրօնական խաղաղութիւնը և դորա հետ միասին ամրացնելու խղճի ազատութիւնը։

Այս ինն խնդիրների քննութեամբ է զբաղուել ժողովը. յաջորդ համարում մենք յառաջ կը բերենք այդ քննութեան արդիւնքը։

ԱՆԴՐ-ԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅԵՐԻ ԱՆՑԵԱԼ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ *)

Հայ վաճառականները սկզբներում ամեն երկու կամ երեք տարին մէկ անգամ վերադառնում էին իրանց ծննդավայրը ծնողների, բարեկամների և ընտանիքի տեսութեան ու կրկին վերադառնում էին Անդրկասպեան երկիրը։ Այդ տուն գնացողները իրանց յետևից քարշ էին տալիս ուրիշ պանդուխտների նորանոր խմբեր։ Մանաւանդ որ տուն դարձողները մի քանի ռուբլու երես տեսած լինելով պարծենում էին ծնողների, բարեկամների և ծանօթների առաջ, որ Անդր-Կասպեան երկիրը լի է ոսկու կոյտերով։ Գայթակղութիւնը կատարեալ էր լինում. ամեն մէկը ցանկանում էր բաժին ստանալ ոսկու կոյտերից... և ճանապարհվում էին Աւագների աշխարհը փող աշխատելու։

Հետզհետէ տեսան, որ իրենց ծննդավայրը գնալով—գործերը գործակատարների յուսով են մնում։ Ուստի և սկսեցին ընտանիքով պանդխտել։ Օրէցօր ընտանիքով պանդխտելը լայն ծաւալ էր ստանում։

Հայ-պանդուխտները կարիք զգացին եկեղեցու և քահանայի։ Ասխաբադում քահանայ կար. բայց աղօթատուն չկար։ Ասխաբադում և Ղզըլ-Արվադում մի քանի պարոններ փող հանգանակեցին և մէկ-մէկ աղօթատուն կառուցին։ Ասխաբադի հայ-քահանան այցելում էր միւս այն տեղերի պանդուխտ հայերին և կրօնական ծիսակատարութիւններն էր կատարում։ Հայը ինչտեղ իւր աղօթատունը կամ եկեղեցին շինեց, այնտեղի հետ էլ պէտք է կապուած մնայ իւր շահերով և զգացմունքներով։ Եկեղեցին կայ, ընտանիքը մօտներն է, քահանան էլ ծէսերն է կատարում, էլ ինչ կարիք կայ հայրենիքի մասին մտածել. նիւթականի կողմից էլ ապահով են. կարող են ալ-ա-ֆրանկա հագնուել և ապրել։ Ամուրի երիտասարդներն էլ կարիք չէին զգում հայրենիք վերադառնալ. չէ՞ որ պակաս չեն այստեղ գեղեցիկ օրիորդներ ինչ հոգ թէ սևաչեայ չեն։ 81—88 թուականների ընթացքում հայ-վաճառականների հըպարտութիւնը մինչև երկինքն էր բարձրացել. ինչու չէին հպարտանալ, քանի որ իրենց հայրենիքում պատառոտած տրեխով, կարկատած չուխայով և մոթալ-փափախով էին ապրել. իսկ այստեղ օսլայած շա-

*) Տես «Արձագանք» № 125.

բեցինք մեր ծերունազարդ Հօր սուրբ աջն. ծալեցինք ուրարներն և առնելով՝ դարձանք յՈւսումնարան, խորին տպաւորութեան ներքոյ։ Մի անպատում եռանդ կ'ոգևորէր զմեզ. ոչ միայն մեր դասերն կը պատրաստէինք, այլ և Ս. Գիրքն կընթեռնուինք, Նախնեաց Գրուածներն կ'որոճայինք, Մեկնութիւններ կը համեմատէինք, քարոզներ կը գրէինք, իրարու մօտ կը կարդայինք և ապա վերջին անգամ կը ներկայացնէինք մեր գիտնական և աստուածաբան Տեսչին, որ շատ անգամ հրաւիրած կ'ունենար իւր մօտ ուսումնական և հմուտ անձեր, նոցա դատողութիւնն ևս իմանալու։ Այն քարոզներն, որք հաւանութեան կ'արժանանային կ'օրինակուէին և ի ժամանակին, Եկեղեցւոյ մէջ կը խօսուէին։ Կը հրճուէր Ս. Հայրապետն իւր Սաներու Թոթովանքներով, կը ցնծար Թիֆլիսի ժողովուրդն և կ'ոգևորուէր Դպրանոցի և Կրթութեան սիրով, տեսնելով իւր բեմերու վրայ պարկեշտ պատանիներ, որք կը քարոզէին Աստուծոյ Խօսքն, կը բացատրէին Ս. Աւետարանն։

Այս գեղեցիկ շարժման ազդեցութեամբն էր, որ ժողովուրդն ամուր կապով կապուեցաւ Դպրանոցի հետ, առատացան Նուէրներն, աւելցան Կտակներն, յառաջ եկան անուանի Բարերարներն, որք իրենց հաշուով չքաւոր մանուկներ որդեգրեցին ի Դպրանոցի, և ոմանք մեծ գումարներ իսկ յատկացուցին. որպէս զի յետ աւարտման՝ յառաջադէմներն կարենան մասնագիտութեամբ կատարելագործիլ Եւրոպական Համալսարանաց մէջ և դառնալով՝ օգտակար լինիլ իրենց Ազգային Դպրոցներուն և Եկեղեցւոյն։

Այսպէս յաւելեան աճմ Դպրանոցի եկամուտներն, որով կարող է միշտ յառաջադէմ և ապահով վիճակ ունենալ՝ ապագայ հոգաբարձութեանց ջանիւք։ Այս եռանդեան և շարժման ծնունդն էր՝ նոյն իսկ Կովկասեան Հայոց դպրոցասիրական ոգևորումն և յուսածիծաղ երկունքն յառաջադիմութեան։

Բայց, մինչդեռ այսպէս կը ցնծար Թիֆլիս, կը ցնծար Կովկասեան հայութիւնն, կը հրճուէր և Ս. Հայրապետն, և առ ինքն կոչելով պատանի քարոզիչներն՝ կ'օրհնէր, անակնկալ մահուամբ փոխեցաւ յաշխարհէս ի խորին սուգ համակելով Ազգն համօրէն և մանաւանդ իւր արթուն և զուարթուն Սաներն, որոց աւետաւոր բարբառն փոխեցաւ յողբ ողբական և քանիցս հեկեկալով շրջապատեցին իրենց որդեսէր Հօր դագաղն, որ դրուած էր Եկեղեցւոյ մէջ և ամեն օր, ամեն ազգէ խուռն բազմութիւն կը դիմէր հանուրց Հայոց Հայրապետի ձեռնափայլ աջն համբուրելու։

Լացին, ողբացին երախտագէտ Սանուկքն, դամբանականներ խօսեցան, հեղձամղձուկ եղեալ մրմունջներ արձակեցին բերտ Խորենացւոյն. «Ո՞ւր քաղցր աչացն հանգարտութիւն առ ուղիղս և ահաւորութիւն առ թիւրս։ Ո՞ւր կուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն. ուր խնդամիտ սիրտն. . . լռեաց ձայնն յորդորեցուցիչ։ Ո՞վ այսուհետև զմերս յարգեսցէ ուսումն. Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւն ընդդէմ առողջ վարդապետութեան յարուցելոցն։ Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով և զմեզ սփոփեսցէ գովելով և չափ դիցէ բանի և լռութեան»։

Հասաւ օրն յուղարկաւորութեան, որուն մասնակից էր բովանդակ Թիֆլիս. փոխադրեցաւ Երանաշնորհ Հայրապետի երկրաւոր մնացորդն ի Ս. Էջմիածին։ Դառն էր այս մահն. ծանր՝ այս զրկումն Եկեղեցւոյն համար, Ազգին համար, նոր Սերնդին համար և յաւէտ Ներսիսեան Դպրանոցի Սանուց համար։ Բայց չը վհատեցան նոքա, աւագներն սփոփեցին իրենց կրտսեր եղբայրներն, որք Կովկասեան բոլոր գաւառներէն գումարուած էին, և ուխտեցին չը շեղիլ այն ճանապարհէն, ուր մտած էին իրենց առաջինի Տեսչի առաջնորդութեամբ և Ս. Հայրապետի օրհնութեամբ։ Աւագներն, մանաւանդ ուրարակիրքն, որք արդէն ուսումնաւարտք էին և մասնաւոր ուսումնասիրութեամբ կը պարապէին, ընտրեցին իրենց աշխատութեան ասպարէզներ, այն է Դաստիարակութեան, Եկեղեցականութեան, և ջանացին, ըստ չափու կարողութեան, պահել Ս. Հայրապետի իղձերն և անշէջ պահպանել այն նուիրական հուրն, որով վառուած էր իրենց մանկութիւնն, իրենց պատանեկութիւնն։

Մենք ևս, որ ի սկզբան դաստիարակութեան պաշտօն կը վարէինք նախ ի Թիֆլիս և ապա ի Շուշի, ուսումնասիրական նպատակաւ ճանապարհորդելով ի Թուրքիա, մեր այցելութեան ժամանակ (1867) ի Սուրբ Տեղիս, պարտաւորեցանք ստանձնել Տեսչութեան և Ուսուցչութեան պաշտօն ի Ժառանգաւորաց Վարժարանի Ս. Երուսաղէմի։

Սոյն պաշտօնավարութեան մէջ, վիճակեցաւ մեզ, ի միջի այլոց, հաճութեամբ Երջանկայիշատակ Եսայի Պատրիարքի և Միաբանական Տնօրէն Ժողովոյ, Կրօնական և Եկեղեցական ուսմանց դասախօսութիւնն։

Ծանր էր արդարև մեր պաշտօնն, զի պարտաւորուած էինք մի կողմէն տնօրինել, կարգաւորել, միւս կողմէն դասեր գրել և դասախօսել. սակայն թէ Ս. Պատրիարքի հայրական քաջալերութիւնն (որ պաշտօնի կոչած ժամանակ՝ արտասանած էր, մեզ համար միշտ անմոռանալի, սոյն խօսքն. «Մի՛ մերժեր, զաւակս, դու ինքնին եկած չես, այլ Աստուած զրկած է զքեզ») և թէ Միաբանութեան համակրութիւնն կը խրախուսէին զմեզ անվհատ ոգևորութեամբ և ցնծութեամբ շարունակել մեր պաշտօնն։ Հին և Նոր Կտակարանաց Պատմութիւններն, Քրիստոնէական Կրօնի Ուսումն և մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ Պատմութիւնն, գրաւոր պատրաստութեամբ, աւանդելէն զկնի՝ կարևոր համարեցինք Հովուական Աստուածաբանութեան դասեր ևս աւանդել. զի առաջնակարգ աշակերտք զարգացած էին հասակաւ և ուսման ճաշակաւ, ոմանք սարկաւագութեան աստիճանի իսկ կոչուած էին, ինչպէս և մենք ընդունած էինք արդէն ձեռնադրութիւն վարդապետութեան։

Հովուական Աստուածաբանութեան կամ Հովուական պարտուց գիտութիւնն ուսուցանելու համար՝ հարկ էր մեզ թէ գրել և թէ դասախօսել։ Ուստի պարտաւորեցանք ձեռք բերել աստուածաբանական ուսման վերաբերեալ և Ս. Գրոց հոգւով յօրինուած երկասիրութիւններ, ընտրանօք թարգմանել, ծաղկաքաղ առնել, և մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ պաշտելի ուղղութեան համաձայն պատրաստել սոյն Հովուական Աստուածաբանութիւնն, զոր այսօր ի լոյս ընծայելով կ'արկանենք իբրև լումայ ի Գանձարան Հայ Եկեղեցական Մատենագրութեան։

Աստ կ'աւարտի մեր Յառաջաբանի պատմական մասն, որ կը պարունակէ այնպիսի յիշատակներ, զորս կարող չէինք անտեսութեան տալ, քանի որ մեր հրատարակութիւնն նուիրուած է Ազգանուէր Աշտարակեցւոյն անմահ անուան և քանի որ սերտ կապ ունի այն ոգևորութեան հետ, որով ոգևորուած, մղուած էր մեր պատանեկութիւնն ի կոչումն Եկեղեցականութեան, և որոյ մի դոյզն արդասիքն է անշուշտ սոյն աշխատասիրութիւնն։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊ. ՄՈՒՐԱԴԵԱՆ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՄԻՆԻԱ. Ռումինական մամուլը Ֆօքշանի բանակի թնդանօթաձգութեան փորձերի առթիւ ուրախութեամբ արձանագրում է որ այժմ Ռումինիան մի անմատչելի պատուար է այն զօրքի դէմ, որ կը համարձակուէր մուտք գործել հիւսիսից կամ արևելքից։ Այդ ամրութեանց գիծը փակում է այն թշնամու ճանապարհը որ կը կամենար յարձակուել Դանուբից մինչև Կարպատեան լեռները համող տարածութեան վրայ։ Գալացի և Ֆօքշանի միջև եղած տարածութեան վրայ թշնամու զօրքը անյաղթելի արգելքներ կը հանդիպի։ Երբ որ վերջանան Բուքարեշտի շուրջը կառուցուող ամրութիւնները, Ռումինայի մայրաքաղաքը Եւրոպայի ամենաամուր բերդերից մէկը կլինի, և այն ժամանակ Ռումինիան կարող կլինի ընդդիմանալ ամէն մի ասպատակութեան և այլ ևս օտար զօրքերի անցուդարձ անելու ճանապարհ չի լինի։

ԱՆԳԼԻԱ. Մարքիզ Սալիսբիւրին National Review-ի մէջ տպագրել է մի յօդուած, որին այն մեկնութիւնն են տալիս, իբր թէ պահպանողականները լորդերի պալատի գործակցութեամբ մտադիր են ամէն կերպ կասեցնել Գլադստոնի ձեռնարկութիւնները և մինչև անգամ փորձ են անում սահմանադրական ընդհարումն յառաջ բերելու։

Սալիսբիւրին պնդում է որ Գլադստոնն իրաւունք չունի, ըստ սահմադրութեան, անտես առնելու լորդերի ժողովի դիմադրութիւնը. նախագծած վերանորոգութիւնն այնպիսի մի ծանրակշիռ խնդիր է որ առանց ազգին դիմելու անհնարին է վերջացնել։

Իսկ եթէ Գլադստոնը կամենայ աւելացնել իւր կողմնակից պէրերի թիւը, պէրի կոչում տալով իւր կուսակիցներից շատերին, նա դարձեալ պիտի չկարողանայ իւր նպատակին հասնել, որ լորդերի պալատն արտօնութիւն ունի ընդունելու կամ չընդունելու կառավարութեան նշանակած պէրերին։ Ինչ վերաբերում է վերին պալատը բոլորովին ջնջելու խնդրին, այդ թերևս որոշէ հեղափոխանական ժողովը, բայց իւր կամքն 'ի կատար ածելու համար Գլադստոնը լիակատար իշխանութիւն պէտք է ունենայ զօրքի վրայ։

Սակայն մարքիզ Սալիսբիւրին երկիւղ է անում որ ինքը ժողովուրդը միջամտէ գործին և խորտակէ վերին պալատի յամառութիւնը։

Այս իսկ պատճառով նա վերջացնում է իւր յօդուածը ասելով թէ լորդերի պալատն 'ի հարկէ կ'ընդունի home rule-ը, բայց միայն այն դէպքում, եթէ այդպիսի ցանկութիւն յայտնեն բուն Անգլիայի ընտրողները, այսինքն բնիկ անգլիացիք, և ոչ թէ շօտլանդացիք, ուէլսցիք և իրլանդացիք։

ԹԻՒՐՔԻԱ. — Times ին հեռագրում են Կ. Պօլսից, որ գեներալ Բրիալմօնը իւր զեկուցման մէջ միայն մի քանի նորոգութիւններ է առաջարկում նեղուցների ամրութեանց գործում, որ նա ընդհանրապէս բաւարար է համարում։ Բայց անհրաժեշտ է տեսնում նոր ամրութիւններ կառուցանել Բոսֆորի մուտքն ապահովելու համար։

—Փարիզի լրագրների տեղեկութիւնների համաձայն Ռուսաստանի և Բ. Դրան բանադնացութիւնները առևտրական դաշն կռելու վերաբերմամբ դադարեցրած են։

ԳԵՐՄԱՆԻԱ. —Times-ին հաղորդում են, որ Գերմանիան Ռուսաստանի հետ մաքսային դաշն կապելու անհրաժեշտ պայման է համարում այն, որ Ռուսաստանը պակասեցնէ գերմանական երկաթէ իրեղէնների վրայ դրած մաքսը։ Եթէ Ռուսաստանն այդ զիջումը չանէ, Գերմանիան կը նախադասէ արգելիչ յարաբերութիւնները։

—Standard-ը հաւատացնում է որ եթէ ռայխստագը չընդունի զինուորական նոր օրինագիծն այն խմբագրութեամբ, ինչպէս որ այն ներկայացուել է դաշնակցական խորհրդին, կոմս Կապրիւին կը համաձայնի փոփոխել օրինագիծը և համեմատաբար քչով բաւականանալ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

Հոկտեմբերի 28-ից.

ՓԱՐԻԶ. — Փօգի զօրքն առաւ Մուակօ բերդը Կանայի մօտ. միւս օրը դահոմէական զօրքերը յարձակուեցին ֆրանսիական զօրքի վրայ, բայց չորս ժամ կռուելուց յետոյ ի փախուստ դարձան։

Կ. ՊՈԼԻՍ. — Սուլթանի աւագ-բըժշկին թոյլ է տրուած նորից ստանձնելու իւր պաշտօնն այն բանից յետոյ, երբ նա պատրիարքի ներկայութեամբ աւետարանի վրայ երդուեց, որ ինքը սուլթանի դէմ թշնամական ոչ մի տեղեկութիւն չէ տուել լրագիրներին։

ՓԱՐԻԶ. — Այսօր Bonsenfants փողոցի ոստիկանական մասում պայթում եղաւ. ժամը $11\frac{1}{4}$-ին Avenue de Opéra Կարմոյի հանքահորատէրների ընկերութեան վարչութեան շինութեան առաջ ոստիկանական երկու պաշտօնեաներն այդ ռումբը ոստիկանատուն տարան. բայց հենց որ նրանք սկսել էին ռումբը քննել, պայթում առաջացաւ, որի ժամանակ ոստիկանական երկու պաշտօնեաները սպանուեցին տեղն ու տեղը և մէկն էլ վիրաւորուեց. պայթումից առաջացած նիւթական վնասները բաւական մեծ են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

(Հոկտեմբերի 27-ին)

	Ռ.	Կ.
Լօնդօն 10 ֆունտն արժէ . .	100	60
Բերլին 100 մարկը — . . .	49	40
Փարիզ 100 ֆրանկը — . . .	39	95
Ոսկին — — — արժէ . .	8	09
Մաքսային կտրօններ — . .	162	—
Արծաթ — — — . .	1	10
Բօրսային զեղչ — —	4%	5½—%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	103	—
— — — 2-րդ — —	103	
— — — 3-րդ — —	›	›
— — — 4-րդ — —	›	›
— — — 5-րդ — —	›	›
— — — 6-րդ — —	102	75
6% ոսկեայ ռէնտա	164	25
4% ոսկեայ փոխառութիւն . .	—	—
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	—
— — — 2-րդ —	103	—
— — — 3-րդ —	105	—
Ներքին 5% առաջին փոխառ.	237	—
— — երկրորդ —	216	25
Պետական. երկաթուղային ռէնտա . . .	104	—
5½ ռէնտա	—	—
4% Ներքին փոխառութեան.	94	75
5% գրաւ. թղթ. Ազն. կալ. բանկի.	101	62
Արք. Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. . .	191	25
Պետերբուրգի քաղաքային վարկի ընկերութ. պարտատոմսեր	101	62
Մոսկուայի քաղ. վարկի պարտատոմսեր — —	101	—
Օդեսայի — —	101	62
Թիֆլիզի — —	98	12
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկ.	102	25
— — Քութայիսի	102	25

Բօրսայի տրամադրութիւնը անդորր է։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է նաև 9 ժամին առաւօտեան, գիշերում է Պասսանաուր կայարանում. իսկ տեղ է հասնում հետևեալ օրը 10 ժամին գիշերուայ։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 5-ին, նոյնպէս առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօ-

---

տիկներով, ճռճռան կօշիկներով և կր'նակօշիկներով էին ապրում։ Գիւղումը, որ ցորնէ հաց ուտելը բացառութիւն է եղել, մինչդեռ այստեղ բազմազան խորտիկների և արտասահմանի խմիչքների չափ ու հաշիւ չկայ։

Կանանց հն խօսք չկայ։ Այդ կանայք Շամախու «աքա-մամաներից», «աղա-բաջիներից» և Ղարաբաղու «ալաններիցն էին բաղկացած»։ Ինչպէս ամեն տեղի հայ կանայք, այնպէս էլ այստեղի պանդուխտ կանայք շուտ լուսաւորուելու համար իրանց հին տարազը փոխեցին և նոր-մօդայի հագնուեցան։ Արտաքին ձևական կողմից աշխատեցին եւրոպացի դառնալ, իսկ ներքին մտաւոր զարգացման մասին երբէք հոգ չտարան։ Այրերը մի կողմից էին դուարճատներում, կաֆէ-շանտաններում իրանց փողերը վատնում. իսկ կանայքն էլ միւս կողմից էին բարոնուհիների, կոմսուհիների, իշխանուհիների պէս օրեկան մի նոր-մօդա փոխում, ոսկի և արծաթի իրերով ու ակնեղէններով զարդարւում…

Այդ կանայք մտաւոր զարգացում չունենալով, գաղափար անգամ չունենալով մանուկների բարոյական դաստիարակութեան վրայ, սկսեցին իրանց մանուկներին, մանաւանդ աղջիկ մանուկներին, իրանց օրինակով դաստիարակել։

Մանուկների հակա-մանկավարժական և հակաբարոյական դաստիարակութիւնը՝ մի քանի հասարակութեան ցաւերին գիտակից պարոնների ստիպեց դպրոցի մասին մտածել։ Այդ միջոցներումը մամուլի մէջ գրուեց դպրոցի կարևորութեան մասին. դպրոցի հարցը օրէցօր հասունանում էր։ Վերջապէս 1890—91 թուերին, ձեռնտուութեամբ Ասխաբադի հայ պանդուխտների, Ասխաբադի հայոց եկեղեցու բակում մի գեղեցիկ դպրոց կանգնեցրին։

Ուսուցիչներ հրաւիրուեցին. ուսումնարանը 1891 թուի սեպտեմբերի 26-ին օծուեց՝ ներկայութեամբ երկրիս կառավարիչ Կուրօպատկինի։

Կարճ միջոցում ժողովուեցան 50-ի չափ երկու սեռի մանուկներ և դաստիարակութիւնը սկսուեցաւ։ — Դպրոցը կայ, եկեղեցին կայ, քարոզիչ քահանան կայ, էլ ինչ է պակաս մեզ, ասում էին ապահովուած վաճառականները և հետզհետէ կազմուեց մի փոքրիկ գաղթականութիւն…։

Պանդխտութիւնն այնքան էլ վտանգաւոր չէ. մէկ կամ մէկ քանի տարի հայ-վաճառականը պանդխտութեան մէջ մնալուց և փող աշխատելուց յետոյ, կրկին վերադառնում է իւր ծննդավայրը, իւր սիրուն հայրենիքը։

Բայց այդպէս չէ գաղթականութիւնը։ Գաղթականը երբ գաղթում է մի օտար երկիր այն մտքով, որ այլ ևս բաղդ չպիտի ունենայ իւր հայրենիքը տեսնելու, նա հիմք է ձգում օտարութեան մէջ, շրջապատում է իրան այնպիսի պայմաններով, որ այլ ևս հայրենիքի մասին չմտածի։

Պէտք է այստեղ յիշեմ, որ հայ պանդուխտին գաղթական դարձնողը շինութիւնն է, որից ձեռք վերցնել չի կարող. և ինչպէս ձեռք վերցնի, երբ արիւն - քրտինքով աշխատած վերջին կոպէկը դրել է շինութիւնների վրայ։ Մոռացայ յիշելու՝ որ Կրասնօվոդսկի, Ղզըլ-Արվադի շինութիւնների մեծ մասը հայերին են պատկանում. այդ շինութիւնները ոչ մի կոպէկ օգուտ չեն տալիս. մինչև անգամ ձրի նստող էլ չկայ, որովհետև մարդ չէ մնացել։ Այդ շինութիւնների տէրերը անգործ, պարապ նստած սպասում են, թէ կը գայ մի օր, որ առաջուայ առևտուրը և գործերը կը լինին… իսկ Կրասնօվոդսկի հայերը սպասում են, որ երկաթուղու գիծը Կրասնօվոդսկին կը միացնի Անդրկասպեան երկրի երկաթուղու հետ։

Հայ վաճառականները նիւթական ապահովութիւն ձեռք չբերելով (մեր խօսքը մեծամասնութեան մասին է), կորցրին վարք ու բարքի մաքրութիւնը։ Նրանք, որոնք իրանց հայրենի օջախի տակ բարոյականութեան նախանձախնդիր կարող էին լինել, պանդխտութեան մէջ ոտի տակ տուին անարատ բարք ու վարքը։ Անմեղ, անարատ երիտասարդը գալիս է օտարութիւն, որպէսզի իւր ծնողներին պահպանի. սկզբում նրան խորթ են թվում անբարոյական երիտասարդների արարքները. բայց չէ անցնում մի քանի ամիս, որ նորեկ երիտասարդը ընդհանուր հոսանքի մէջ կուլ է գնում։

Քանի որ դեռ նորեկ երիտասարդը չէ ընտելացել անբարոյական կեանքին, մասն է հանում իւր ծնողներին երբեմն-երբեմն փող է ուղարկում. իսկ երբ ընտելացել է անբարոյականութեան, օրուայ աշխատածը սիրուհուն անգամ չէ բաւականանում, այն ժամանակ ծնողները կոպէկի երես չեն տեսնում։

Շատ անգամ պատահում է, որ հայ պանդուխտը երբ վերադառնում է օտարութիւնից, սկսում է իրան ծնողների և ծանօթների առաջ ցոյց տալ, որ մեծ հարստութեան տէր է. գեղեցիկ աղջիկները սիրահարվում են նրա վրայ. ամէն մէկ մայր աշխատում է, որպէս զի իւր աղջիկը նրան տայ։ Մեր պանդուխտը պսակվում է մէկ սիրուն աղջկայ հետ և երկու շաբաթ կամ մէկ ամիս մնալով, կրկին վերադառնում է իւր պանդխտութեան տեղին, պատրուակելով, որ առևտրական գործերը և կապալները գործակատարների յուսով է մնացել։ Անցնում են տարիներ և նա չի վերադառնում։

Կարծում ենք ընթերցողներին բաւական գաղափար տուինք, որ պանդուխտ հայը նիւթական բարօրութիւն ձեռք չբերելով, բարոյական ու ֆիզիքական առողջութիւնները կորցրեց։

Սակայն որքան էլ ընկած լինէր ժողովուրդը, անկարելի էր, որ ժամանակի ազդեցութեանը ենթարկուած չլինէր։ Ժամանակակից հայ-մամուլը և գրականութիւնը խորը կերպով ազդում էր հայ-պանդխտի մտաւոր զարգացման վրայ։ Երիտասարդ վաճառականներն ու գործակատարները՝ լրագրութեան շնորհիւ, սկսեցին հետաքրքրուել ազգային-հասարակական գործերով։ Իրանց աղքատիկ լուման չէին խնայում մի որևէ բարեգործական նպատակի։ Ընթերցանութիւնը հետզհետէ սկսեց տարածուել ժողովրդի մէջ. գործակատար երիտասարդները մի քանի անգամ բարեգործական նպատակով ներկայացումներ տուին Ասխաբադում, Մերվում և Ղզըլ-Արվադում։ Հետզհետէ հասարակութիւնը աւելի սիրով վերաբերուեց դէպի ընդհանուր-հասարակական գործերը։ Այժմս ժողովուրդը ստանում է լրագրներ և գրքեր. ընթերցանութիւնը մեծ ծաւալ է ստանում։ Օր ըստ օրէ հասարակութեան մտաւոր հորիզոնը լայնանում է։

Չեմ կարող այստեղ լռութեան տալ մի մխիթարական երևոյթ, այդ այն է, որ վերջին ժամանակներս մի տեսակ ձգտումն է երևում դէպի հայրենիք վերադառնալու. շատերը խօլերայի երկիւղից հայրենիք վերադարձան։ Մինչև խօլերան բազմաթիւ հայեր դեռ իրենց ընտանիքը բերում էին Անդր-Կասպեան երկիրը։ Այժմս շատերը պատրաստւում են վերադառնալու. իսկ շատերն էլ մինչև գարնան կը վերադառնան։

Յուլիսի 23-ին, 24-ին և 25-ին, երբ խօլերան սարսափելի կոտորածներ էր անում Ասխաբադում, ահա թէ ինչ էր լսվում ամէն մի հայի բերանից. «Տէր Աստուած, եթէ մահ տալու ես մեզ, թող վերադառնանք մեր հայրենիքը և այնուհետև մեռնենք էլ հոգս չունենք, գոնէ մեր հայրենիքում մեր գերեզմանն օրհնող և մեզ վրայ արտասուողներ կը լինին»։ Անհետատես հայերը միայն վտանգի ժամանակ յիշեցին իրենց սիրուն հայրենիքի, քաղցրահամ աղբիւրների ու զովարար օդի մասին. վտանգի ժամանակ միայն զգացին հայրենիքի նշանակութիւնը. զգացին որ օտարութեան մէջ յիշատակները անհետ պիտի կորչին։

Մենք սոյն յօդուածով նկարագրեցինք պանդուխտ հայ-վաճառականին միայն։ Կ'աշխատենք մի այլ յօդուածով նկարագրել պանդուխտ հայ-գիւղացու— մշակի դրութիւնը և քննել պանդխտութեան դիմելու պատճառները։

Միքայէլ Մ. Զանգակեան։

տեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում. Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7½-ին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Գուդաուր, տեղ է հասնում հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը 7 ժամին երեկոյեան։

Նոյն տեսակ կառք ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը 8½ ժամին երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ԶՈՒԲԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Ամէն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ։

Բաթում-Ից գոյքը կ ֆնում.

Երեքշաբթի օրերը, յերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Սուխումի և Նովորոսիյսկի վրայով։

Հինգշաբթի օրերը, յերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովորոսիյսկի վրայով։

Կիւրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին (շաբաթ գիշերը լոյս կիրակի), շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Բաթում-Ի կ հասնում.

Չերեքշաբթի օրերը առաւօտեան, ուղիղ ընթացքով կերչի և Նովորոսիյսկի վրայով։

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստներով։

Կիւրակի օրերը գիշերուայ 12-ի ժամին, ուղիղ ընթացքով Նովորոսիյսկի և Սուխումի վրայով։

Փոթիից գոյքս կ ֆնում.

Փոստային-մարդատար շոգենաւը ղեպի Օդեսա, կիւրակի օրերը, առաւօտեան ժամը 8, իսկ հինգշաբթի օրերը, գործը վերջացնելուց յետոյ, ղեպի Բաթում։

Փոթի կ հասնում.

Փոստային-մարդատար շոգենաւը Օդեսայից ուրբաթ օրերը յերեկով, իսկ կիւրակի օրերը Բաթումից լուսաբացին։

Ապրանքափոխ-մարդատար գիծ.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը, յերեկուայ 2 ժամին, Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Բաթումից հասնում է հինգշաբթի օրերը կէսօրին մօտ Փոթիի վրայով։

Փոթիից դուրս է գնում ուրբաթ օրերը, գործը վերջացնելուց յետոյ, ղէպի Օդեսա, իսկ հինգշաբթի օրերը առաւօտեան 9 ժամին ղէպի Բաթում։

Փոթի է հասնում երկուշաբթի օրերը յերեկով Օդեսայից, իսկ ուրբաթ օրերը երեկոյեան 6 ժամին Բաթումից։

Ապրանքակիր մարդատար նաւերի վրայ II և III կարգի համար ուղևորներ են ընդունվում առանց ուտելիք տալու։

Ընկերութեան գրասենեակը գտնվում է Թիֆլիզի Կալուածական Բանկի գալերէյում № № 117 և 118։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ամենքին, որ համաձայն խորհրդի՝ 1892 թուի հոկտեմբերի 12-ի որոշման՝ առաջիկայ 1893 թուի յունուարի 1-ից փողոցի ջրմուղներից վերցնուող ջրի գինը նշանակվում է ⅜ կոպէկ—դոյլին (վեդրօին), բացի դոյլերով կրած ջրից, որի վերաբերութեամբ պահպանվում է արդէն եղած սակագինը, այսինքն դոյլին ¼ կոպէկ։

Բացի սորանից, ծանուցւում է հասարակութեան, որ ջրկիրների ջուրը կրելու գինն էլ նոյն ժամանակից իջնում է ⅜ կոպէկի, այնպէս որ իւրաքանչիւր դոյլ ջրի արժէքը տուն հասցնելով մնում է նոյնը, ինչ որ այժմ է, այն է ¾ կոպէկ։

(116) (1—1)

ТИФЛИССКІЙ КАЗЕННЫЙ ТЕАТРЪ

Въ пятницу, 28-го октября,

товариществомъ русскихъ драматическихъ актеровъ подъ управленіемъ В. Л. ФОРКАТТИ, съ участіемъ П. А. Стрепетовой, представлено будетъ

I

„ГРОЗА“,

драма въ 5 д., А. Н. Островскаго

Роль Катерины исполнитъ П. А. Стрепетова.

II

„ЗАТѢЙНИЦА“,

Вод. въ 1 дѣйс., Д. А. Мансфельда.

Участ.: г-жи П. А. Стрепетова, Гагарина, Михайлова, Алинская, Нѣжина, Ольгина, Ренина, Петрова и др.; гг. Иволгинъ, Милославскій, Семашко-Орловъ, Каренинъ, Соломинъ, Энбе, Васильевъ, Николинъ и др.

Режиссеръ **М. Н. Милославскій.**

Начало въ 7½ час. вечера.

АНОНСЪ. Въ воскресенье, 1-го ноября, два спектакля: утренній, по уменьшеннымъ цѣнамъ, „Христоферъ Колумбъ“, вечерній, съ участіемъ П. А. Стрепетовой, по желанію публики, „Горькая судьбина“.

ФОРКАТТИ.

Լոյս տեսաւ և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում

ՅԱԿ. ՂԱԶԱՐԵԱՆԻ

ՓԷՓՕ

ՔՐԴԱԿԱՆ ԼԵԳԻՆԴԱ

ԴԻՆՆ Է 15 ԿՕՊ.

Նոյն հեղինակի՝

Թասիբ, տաճկահայ պատ. կեանքից. 20 կ.

Գիւլէ, մի արկած քիւրդ. կեանքից. 15 կ.

(2—1)

ԼՈՑՄ ՏԵՍԱԻ

և

վաճառվում է բացառապէս կենդրոնական գրավաճառանոցում

ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

ՀԱՅՈՑ ԳԻՐՔ

Բաղկացած 400 երեսից, և 8 վիմատիպ նկարներով. պատկառած է Մահակ-Մեսրովպեան մրցանակով. Գինն է 1 ռ. 50 կ., դրամարով գնողներին 15% զեղչ.

(Խմբ.) (10—1)

Parfumerie Ganterie

MODES

H. BERLEMONT

COIFFEUR

de S. A. I. le Grand Duc

MICHEL NICOLAÉVITCH

Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux, rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.

Salon de coiffures pour dames.

—

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ։

Берлемонъ, Дворцовая улица.

(91) (100—14)

Սեպտեմբերի 1-ից Երևանեան հրապարակի վրայ, քաղաքային տանը, դեղավաճառանոցին կից

ԲԱՑՈՒԱԾ Է

ԴԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ

Մ. Ի. ԱՂՄՈՒՐՕՎԻ

(78) (100—14)

ԷՓԱՆԱԴԻՆ ԴՐԱԴԱՐԱՆԸ, որ գտնվում էր Մէլքայէլեան կամուրջի վրայ, տեղափոխուել է Մէջի-փողոց, տուն Տէր-Ասատուրեանի։ Բացուած է և ԸՆԹԵՐՑԱՐԱՆ. վճարը 2 կոպէկ։

(107) (3—3)

Թիֆլիզի Հայ Հոգևորականաց Ապահովութեան Գանձարանի Վարչութիւնը սորանով յայտարարում է Թիֆլիզի Հայ Հոգևորական և աշխարհական դասին, որ նոյեմբերի 1-ին, Ամենայն Սրբոց տօնի հետևեալ օրը, կիւրակէ, 11 ժամին, Սուրբ-Աւետաց եկեղեցում (Ջգրաշէնի) մատուցուելու է սուրբ պատարագ և կատարուելու է Հոգեհանգստեան պաշտամունք կարդ գանձարանիս նուիրաբերողների ննջեցեալների հոգեյիշատակի համար և կարդացուելու է բոլոր նուիրաբերողների անուանական ցուցակը։

Ուստի պատիւ ունի հրաւիրել Հոգևորական և աշխարհական դասին ներկայ լինելու նշանակեալ ժամին յիշեալ եկեղեցում։

Նախագահ Վարչութեան՝ Եպիսկոպոս Տէր-Բաբգէնեան։

(115) (2—1)

Գօլովինսկի պրօսպեկտի վրայ, Ռէյտերի տանը, «Սաքադուրի» հիւրանոցի կողքին, չէռնոռ գէնէրով վաճառվում է

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՍՈՒՐՃ (ԿՕՓԷ)

ամեն տեսակ— ծէծած, բոված, հում և այլն։

(114) (5—1)

Յ. ԹԱՅԻՐԵԱՆՑԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆՑԻ

ՍԱՊՈՆԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

Յայտնում է, որ պատրաստում է ընտիր տեսակի ՍԱՊՈՆ լուացքի համար.—պ ո ւ ղ ն ե ր ի ց պատրաստած՝ նշէ և մ ա ր մ ա ր ի ո ն ե ա յ կալապագոյն։

Փոքր քանակութեամբ, այն է մէկ և հինգ ֆունտանոց կտորներով վաճառվում է Կովկասեան գեղատնային ընկերութեան խանութում և հետևեալ՝ սեպհական վաճառանոցներում։—ա) Սալդատսկի բազար, տուն Բուղդանեանի, բ) Օլգինսկայա փ. տուն Մէբուրնուքեանի, գ) Թուրքի մէյդան, քաղաքային բուդկան, դ) Հալաբարի հրապարակի քաղաքային բուդկան։ Իսկ արկղներով մեծ քանակութեամբ վաճառվում է գործարանում Երևանեան խճուղու վրայ սեպհական տանը։

(110) (5—3)

Ա. Ռ Ա. Զ Ի Ն

ՀԱՅԵՐԷՆ ՀԱՍՕՒԱԾԱԿԱՆ (ՊԱՏԻՒ) **ՕՐԱՑՈՑՑ**

1893 թ.

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՈՐԻ)

ՀԱՐՈՒՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Լոյս կը տեսնի Հոկտեմբերի 15-ին. գինն է 60 կոպէկ, առանց ճանապարհածախքի (անցեալ տարի արժէր 75 կոպէկ)։ Հարիւրից աւելի գնողին 25% զեղչ է լինում։

ԳԻՒՏ ՔԱՀ. ՂԱՆԵԱՆՑ.

10—9

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ԳԱՍԱԳՐՔԵՐԸ ՀՆՑՈՑ ԹԻՒԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1)	Ազանեան՝ Ազօթատետր Հայոց եկեղեցական-ծխական և արքունի Ռ. կ. ուսումնարանների համար	— 10
2)	» Կրօնի դասագիրք. երկրորդ տարի	— 25
3)	» » երրորդ տարի	— 25
4)	Սահակեանց Ս. ք. Սրբազան պատմ. Հին—Ուխտի.	— 40
5)	Տէր-Մատթէոսեան՝ Սկզբունք քր. հաւատոյ.	— 60
6)	Սիմոնեանց Պ.՝ Սրբազան պատմ. հ. կտակ.	— 25
7)	Կոստանեան՝ Նախաշաւիղ գրաբար.	— 25
8)	» Ծաղկաքաղ շրջան Ա. գր.	— 40
9)	» Ծաղկաքաղ շրջան Գ. գր.	— 40
10)	Եղիշէ ըստ Անձևացեաց օրինակի	— 80
11)	Ղուկասեանց Հ.՝ Քերականութիւն գրաբար լեզուի Հայոց.	— 50
12)	» Ընդհանուր պատմութիւն, հին դար	— 80
13)	Նազարեան՝ Հայոց լեզուի դասագիր ե. տարի	— 40
14)	» » » » գ. տարի	— 60
15)	» Ընտիր հատուածներ.	1 25
16)	Ս. Մալխասեանց՝ Գրաբարի հոլով. խոնարհ. և նախդ.	— 25
17)	» Գրաբարի համաձայնութիւնը.	— 50
18)	Ս. Մանդինեան՝ Համառօտ մանկավարժութիւն	1 50
19)	» Չենչէլի բացատր. ուսուց. համար	— 30
20)	Գ. Երզնկեանց՝ Թուաբ. խնդիրներ և օրինակներ տարրական դասընթացք ա. և բ. տարի.	— 30
21)	» գ. տարի.	— 35
22)	Վարձելեան՝ Դասագիրք Թուաբանութեան	— 70
23)	Տէր-Սարգսեան՝ Վայել. դաստ. եղանակը.	— 20
24)	Երզնկեան՝ Դասագիրք ձայնագրութեան	— 60
25)	Սիմէօնեան՝ Աշխարհագրութիւն, մ. բնակ.	— 60
26)	» » մ. քաղաքական	— 60
27)	Вересовъ, Рисованіе по свѣткѣ для самостоятельн. занятій дѣтей въ школѣ и дома	— 15
	Тоже полное изданіе	— 25
28)	Теръ-Давтянцъ, Рус. Сл. Рук. для Арм. уч. годъ I и II	— 50
29)	Теръ-Акопіанцъ, Начальная книжка Русск. язык. для Армянскихъ училищъ, годъ I, II и III	— 45
30)	Его же, Учеб. Русск. языка для Армян. училищъ	— 60

Դումարով գնողներին 20% զեղչումն է լինում։

Փոստի և ճանապարհածախքը գնողների վրայ է։

(72) (5—4)

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ

ՀԱՄԱՁԱՅՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՕՐՖԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեպհական տանը №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտները 8 — 12 ժամը. / երեկոները 4 — 6 ժամը։

Իսկ կիւրակի և տօն օրերին առաւօտեան 8 — 2 ժամը կէսօրից յետոյ։

(2) (150—117)

ՄԻ ՕՐԻՈՐԴ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է բարձեր, մուֆթաքաներ, սեղանի ծածկոց, ՈՍԿԵԹԵԼՈՎ, ՄԵՏԱՔՍՈՎ և ԿԱՆՈՒԱՅՈՎ զոնազան տեսակ կարուած, նոյնպէս սպիտակեղէնի վրայ նշաններ։ Հասցէն հարցնել պ. Նուգզարեանցի մագազինում։

Эриванск. площадь, въ Городскомъ домѣ, въ Тифлисѣ.

(93) 5—4)

ԾԽԱԽՈՒՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՆԻԿՈՂ. ՅՈՎՀ. ԲՈՋԱՐՋԻԵՆՑԻ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1858 ԹՈՒԻՑ

Յարգելի հասարակութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում իմ գործարանում պատրաստուած առանց կրակխմալի պապիրոսների վրայ, որոնք պատրաստվում են յատկապէս յարմարեցրած մեքենաներով շատ մաքուր։ Այդ կերպով պատրաստուած ծխախոտները գործածելով պ. պ. ծխողներն ազատ են մնում կրակխմալի անախորժ համից և անմաքրութիւնից։

Գարձեալ ստացել եմ տաճկական ամենաընտիր հոտաւէտ ծխախոտներ և պատրաստվում են շատ չափաւոր գներով իւրաքանչիւր ծխողի ճաշակին համեմատ։ Պատուէրները ընդունվում են Գվօրգովի փողոցում, № 1։

(71) (12—11)

ԲԱՖՓԻԻ մահարձանը կառուցանելու համար գումարուած Մասնաժողովը հրաւիրում է ճարտարապետներին կազմել մահարձանի նախագիծը։ Լաւագոյն նախագծերի համար որոշուած է երկու մրցանակ՝ առաջինը—200 ռ., երկրորդը—100 ռ.։ Կառուցման ծախքը չպէտք է անցնի 10,000 ռուբլուց։ Նախագծերի ներկայացնելու ժամանակամիջոցը լրանում է 1893 թ. փետրուարի 1-ին։ Գեանի չափը 9 արշին է երկայնութեամբ, իսկ լայնութեամբ (ճակատը)—8 արշին։ Նախագծերը քննելու համար հրաւիրուելու են մասնագէտ քննիչներ։ Նախագծերը պէտք է ուղարկուին հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Инженеру Григорію Киракосову, Старо-Арсенальная, д. князя Ходжаминасова.

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ

ԴԵՊՕ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՆՕՏԵՐԻ

Մատակարար Արքունի Թատրոնի և Արտիստիք. ընկերութեան,

ՓՈՅԵԼՆԵՐ ԵՒ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Պէսէրբուրգի գործարաններից

Կ. Մ. ՇՐԵԴԵՐԻ—արքունի գործարան, ԵՂԲ. ԴԻԴԵՐԻԽԻ և ՍՄԻՏՏ ՎԵԳԵՆԵՐԻ։ Ինչպէս յիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական դիպլոմում ունիմ մեծ քանակութեամբ պ ա յ ե ն ե ր և պ ա շ ա մ ո ր ե ն ե ր։

Ջ ո ւ լ ա յ ե ն ե ր, պ ր ե լ ե ր, վ ի ո լ ո ն չ ե լ ե ր, ֆ լ ե պ ր ե ռ ե ր, է ք լ ե ռ ա ն ե ր, Ք ե յ պ ա ն ե ր, ֆ ո ռ ն ո յ ն ե ր, լ ր ե ր, ն օ թ ե ր և երաժշտական գործիքների բոլոր պարագաներն առաջարկում եմ մեծ քանակութեամբ։ Գները գործարանային։ Վաճառում եմ հատով և մեծ քանակով։ Գները կարելի է վճարել մաս առ մաս։ Օտարերկրացիների պարը կարելի է վճարել մաս առ մաս։ Գնած իրերն ընդունւում են անվճայպէս։ Գնած իրերն ընդունւում են ուղարկելու տրանսպորտային ընկերութիւնների սակագնով։

Музыкальное депо Б. Мириманяна.

Тифлисъ, Дворцовая ул.

(62) (20—12)

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Октября 1892 года.

Տպարան Յ. Մարտիրոսեանցի։

Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул. д. № 1—2